ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 842-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1562-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

—————————— 2024 թվականի N - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 842-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1562-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում*** *է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագիրը հաստատելու մասին» N 842-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

- որոշման վերնագիրը, 1-ին կետը, 2-րդ կետի 1-ին ենթակետը, հավելվածի վերնագիրը, հավելվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ և 23-րդ կետերը «սահմանամերձ» բառից հետո լրացնել «և առանձին» բառով.
- հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը «գ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» պարբերությամբ՝

«դ. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնք ծրագրին դիմելու օրվա

դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում.».

- հավելվածի 3-րդ կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով՝

«5) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր։».

- հավելվածի 11.2-րդ կետը «շահառուները» բառից հետո լրացնել «(ամուսիններից առնվազն մեկը)» բառերով.
- հավելվածի 24-րդ կետում «2000» թիվը փոխարինել «2400» թվով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2025 թվականների ծրագրի իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1562-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

- որոշման վերնագիրը, որոշման 1-ին, 2-րդ, 4-րդ կետերը, N 1 հավելվածի վերնագիրը, N 1 հավելվածի 1-ին կետը, 2-րդ կետի 1-ին ենթակետը, N 2 հավելվածի վերնագիրը, N 2 հավելվածի 1-ին կետը, 2-րդ կետի 1-ին ենթակետը, 3-րդ ենթակետը, N 1 ձևի վերնագիրը «սահմանամերձ» բառից հետո լրացնել «և առանձին» բառով.
- N 1 հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետը և N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը «գյուղական» բառից հետո լրացնել «և առանձին» բառով.
- N 1 հավելվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը և N 2 հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը «գ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ» պարբերությամբ՝

«դ. առանձին բնակավայրերի դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնության մեջ գտնվող, առնվազն մեկ՝ 13 տարին չլրացած երեխա և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ամուսիններ, որոնք ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 1 տարվա ընթացքում հաշվառված չեն եղել Երևան քաղաքում.».

- N 1 հավելվածի 2-րդ կետը 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ ենթակետով՝

«10) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր։».

- N 2 հավելվածի 2-րդ կետը 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով՝

«8) **առանձին բնակավայր**՝ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գոմք բնակավայր։»։

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված փոփոխությունը՝ շահառուների թվի հավելումը տարածվում է բացառապես՝

- 2024 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ շինարարության թույլտվություն ստացած շահառուների վրա.
- Տավուշի մարզի Բաղանիս, Բերքաբեր, Կիրանց, Ոսկեպար և Վայոց ձորի մարզի Գոմք բնակավայրերում անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) նպատակով դիմած շահառուների վրա։ Ընդ որում, նշված 5 բնակավայրերից յուրաքանչյուրի համար նախատեսվում է աջակցություն տրամադրել մինչև 50 շահառուի։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։